ՀԱՅԱՍՏԱՆ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ՀՈՒՆՎԱՐ – ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024



Հիմնական տնտեսական ցուցանիշներ

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշ 2024թ. հունվար-դեկտեմբեր՝ աճողական



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2024 թվականի հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 8.0%:

- **Արդյունաբերություն:** Արդյունաբերության աճը 2024թ. հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ կազմել է 4.7%: Աճին դրական նպաստում է ունեցել մշակող արդյունաբերությունը, որի աճը կազմել է 6.5%: Բացասական ազդեցություն է ունեցել հանքագործական արդյունաբերությունը, որի կրճատումը կազմել է -8.6%:
- **Առևտուր:** Ներքին առևտրաշրջանառության աճը 2024թ. հունվար–դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ կազմել է 17.0%: Ավտոմեքենաների առևտրի ծավալը նույն ժամանակահատվածում նվազել է –4.3%–ով:
- **Գյուղատնտեսություն:** Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ծավալի աճը 2024թ. հունվար–դեկտեմբերին կազմել է 1.9%, իսկ գյուղատնտեսության ծավալի աճը՝ 1.6%: Գյուղատնտեսության աճին դրական է նպաստել բուսաբուծության 0.9%, անասնապահության 2.2%, ձկնորսության 4.3% և անտառային տնտեսության 53.2% աճը:
- **Շինարարություն:** Շինարարության աճը 2024թ. հունվար–դեկտեմբերին կազմել է 14.5%: Շինարարության ծավալի աճին նպաստող հիմնական աղբյուրները հանդիսացել են բնակչության միջոցներով շինարարության 33.8% աճը և բյուջեի միջոցներով շինարարության 14.8% աճը:
- **Ծառայություններ:** Ծառայությունների ծավալի աճը 2024 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 10.6%, աճ է գրանցվել ծառայությունների բոլոր տեսակների գծով, բացառությամբ «տրանսպորտ» ծառայության, որի կրճատում է կազմել է -11.9%

Զբոսաշրջություն

Գծապատկեր 2. Միջազգային զբոսաշրջիկների ժամանումներ (հազար)



Գծապատկեր 3. Ռուսաստանից զբոսաշրջիկների քանակ



Զբոսաշրջության դինամիկա (2023-2024 թթ. հունվար-դեկտեմբեր):

- 2024 թվականի հունվար-դեկտեմբերին թվաքանակը հասել է **2,208,179 զբոսաշրջիկների՝** նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվելով -4.7%-ով:

- 2024 թվականի հունվար-դեկտեմբերին Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկներին բաժին է ընկել բոլոր մուտքերի 42.5%-ը: 2023 թվականի նույն ժամանակահատվածում Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկներին բաժին է ընկել բոլոր մուտքերի 49.1%-ը:

- Ժամանողների ընդհանուր թվի փոքր նվազումը պայմանավորված է առաջին հերթին Ռուսաստանից ժամանողների թվի կրճատմամբ, որոնք ամենամեծ մասնաբաժին են կազմում:

Զբոսաշրջություն



Ժամանումներ ըստ երկրի
Հունվար-դեկտեմբեր 2024

Երկիր	Զբոսաշրջիկներ	S/S համեմատ
Ռուսաստան	937,823	-17.5%
Վրաստան	266,048	5.3%
Իրան	176,453	18.0%
ԱՄՆ	58,965	2.7%
Հնդկաստան	43,672	24.8%
Չինաստան	32,826	65.0%
Ֆրանսիա	30,194	9.7%
Գերմանիա	28,717	3.2%
Ուկրաինա	28,238	6.8%
Ֆիլիպիններ	24,755	25.5%

Միջազգային առևտուր - Արտահանում

Գծապատկեր 4. Ապրանքների արտահանում, մլն ԱՄՆ դոլար



Գծապատկեր 5. 2024 թվականի հունվար-դեկտեմբեր առավելագույն արտահանման ծավալ ունեցող 10 ապրանք, մլն. ԱՄՆ դոլար



Արտահանումը 2024 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 13,092.2 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 4,540.2 մլն. ԱՄՆ դոլարով կամ 53.1%-ով:

2024 թվականի հունվար-դեկտեմբերին Հայաստանից արտահանված հիմնական ապրանքախմբերն են (աճերը բերված են 2023թ. հունվար–դեկտեմբերի համեմատ)՝

- **Ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի՝ 5,605.3 մլն ԱՄՆ դոլար (աճել է 3.1 անգամ):**
- **Ոսկերչական իրեր՝ 899.4 մլն ԱՄՆ դոլար (աճել է 80.3%-ով):**
- **Հեռախոսային և հեռագրային ապարատ, մոդեմ, մասեր՝ 672.5 մլն ԱՄՆ դոլար (աճել է 25.6%-ով):**
- **Պղինձի հանքաքար, խտանյութ՝ 558.3 մլն ԱՄՆ դոլար (աճել է 15.6%-ով):**
- **Արծաթ անմշակ կամ կիսամշակ, փոշի՝ 552.7 մլն ԱՄՆ դոլար (աճել է 12.8 անգամ):**

2024 թվականի հունվար-դեկտեմբերին վերոնշյալ 5 ապրանքախմբերը կազմում են ընդհանուր արտահանման ծավալի 63.3%-ը, որից միայն «Ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի» ապրանքախմբի տեսակարար կշիռն ընդհանուր արտահանման մեջ կազմել է 42.8%:

Միջազգային առևտուր - Արտահանում

Գծապատկեր 6. Արտահանումն ըստ երկրների, տեսակարար կշիռ, %



2024 թվականի հունվար-դեկտեմբերին արտահանման գծով հիմնական գործընկեր երկրներն են՝

- Արաբական Միացյալ Էմիրություններ. արտահանման ծավալը կազմել է 5,254.9 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 2.4 անգամ,
- Ռուսաստան. արտահանման ծավալը կազմել է 3,162.0 մլն ԱՄՆ դոլար՝ կրճատվելով -10.7%-ով,
- Հոնկոնգ. արտահանման ծավալը կազմել է 1,756.5 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 2.6 անգամ,
- Չինաստան. արտահանման ծավալը կազմել է 1,097.5 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 2.6 անգամ:

Վերոնշյալ 4 երկրների գումարային արտահանումը կազմել է ընդհանուր արտահանման 86.1%–ը:

Միջազգային առևտուր - Ներմուծում

Գծապատկեր 7. Ապրանքների ներմուծում, մլն ԱՄՆ դոլար



Գծապատկեր 8. 2024 թվականի հունվար-դեկտեմբերին առավելագույն ներմուծման ծավալ ունեցող 10 ապրանք, մլն ԱՄՆ դոլար



Ներմուծումը 2024 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 17,066.9 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 4,309.0 մլն. ԱՄՆ դոլարով կամ 33.7%-ով:

2024 թվականի հունվար-դեկտեմբերին Հայաստան ներմուծված հիմնական ապրանքախմբերն են՝ (աճերը բերված են 2023թ. հունվար–դեկտեմբերի համեմատ)՝

- **Ոսկի անշակ, կիսամշակ, փոշի՝ 5,943.3 մլն ԱՄՆ դոլար (աճել է 3.3 անգամ):**
- **Հեռախոսային սարքեր և ապարատներ՝ 827.0 մլն ԱՄՆ դոլար (աճել է 15.7%-ով):**
- **Բնական և հեղուկ գազ՝ 556.3 մլն ԱՄՆ դոլար (աճել է 7.3%-ով):**
- **Ավտոմեքենա մարդատար՝ 520.1 մլն ԱՄՆ դոլար (կրճատվել է 2.5 անգամ):**
- **Ադամանդե քար՝ 500.9 մլն ԱՄՆ դոլար (աճել է 6.4%-ով):**

2024 թվականի հունվար-դեկտեմբերին վերոնշյալ 5 ապրանքախմբերը կազմում են ընդհանուր ներմուծման ծավալի 48.9%-ը, որից միայն «Ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի» ապրանքախմբի տեսակարար կշիռն ընդհանուր ներմուծման մեջ կազմել է 34.8%:

Միջազգային առևտուր - Ներմուծում

Գծապատկեր 9 Ներմուծումն ըստ երկրների, տեսակարար կշիռ, %



2024 թվականի հունվար-դեկտեմբերին ներմուծման գծով հիմնական գործընկեր երկրներն են՝

- Ռուսաստան. ներմուծման ծավալը կազմել է 9,434.1 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 2.1 անգամ,
- Չինաստան. ներմուծման ծավալը կազմել է 1,181.9 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 24.2%-ով,
- Վրաստան. ներմուծման ծավալը կազմել է 785.7 մլն ԱՄՆ դոլար՝ կրճատվելով -16.8%-ով,
- Իրան. ներմուծման ծավալը կազմել է 639.7 մլն ԱՄՆ դոլար, աճելով 4.5%-ով:

Վերոնշյալ 4 երկրների գումարային ներմուծումը կազմել է ընդհանուր ներմուծման 70.6%–ը:

Աշխատանքի շուկա, ֆորմալ զբաղվածություն

Գծապատկեր 10. Ֆորմալ զբաղվածություն, հազար աշխատող



2024թ. դեկտեմբերի վերջին ֆորմալ զբաղվածների քանակը հասել է 783.9 հազարի, 2023թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 5.2%–ով:

2024թ. դեկտեմբերի վերջի դրությամբ զբաղվածությամբ առաջատար ճյուղերն են՝

- **մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում՝** 134.8 հազար աշխատող:
- **Կրթություն՝** 128.0 հազար աշխատող:
- **Մշակող արդյունաբերություն՝** 90.9 հազար աշխատող:
- **Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում՝** 53.4 հազար աշխատող:
- **Տեղեկատվություն և կապ՝** 45.6 հազար աշխատող:
- **Շինարարություն՝** 42.0 հազար աշխատող:

Գծապատկեր 11. Ֆորմալ զբաղվածություն (առաջատար ոլորտներ) Դեկտեմբեր, 2024 տեսակարար կշիռ %



2023 թվականի դեկտեմբերի համեմատությամբ զբաղվածների թվաքանակի աճ է գրանցվել բոլոր ոլորտներում բացառությամբ Պետական կառավարման և պաշտպանության ոլորտում, որի կրճատումը կազմել է -0.02%:

Աշխատանքի շուկա, աշխատավարձ

Գծապատկեր 12. Միջին աշխատավարձն ըստ տնտեսության ճյուղերի Դեկտեմբեր 2024, հազար ՀՀ դրամ



Գծապատկեր 13. Աշխատավարձի փոփոխությունն ըստ ճյուղերի Դեկտեմբեր 2024թ., %



2024թ. դեկտեմբերին միջին ամսական աշխատավարձը կազմել է 353,279 դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 6.2%–ով, մասնավորապես պետական համակարգում միջին ամսական աշխատավարձը 2024թ. դեկտեմբերին կազմել է 314,226 դրամ (+4.6%), իսկ մասնավոր հատվածում՝ 369,072 դրամ (+6.6%):

2024թ. դեկտեմբերին առավելագույն բարձր աշխատավարձ ունեցող 3 ճյուղերն են՝

- **Ֆինանսական և ապահովագրական գործունեությունն՝** 1,286,422 դրամ:
- **Տեղեկատվություն և կապ՝** 1,015,249 դրամ:
- **Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում՝** 821,333 դրամ:

2023թ. դեկտեմբերի համեմատ աշխատավարձի աճ է գրանցվել բոլոր ճյուղերում:

Առավելագույն աճ գրանցվել է հետևյալ ճյուղերում՝

- **Ֆինանսական և ապահովագրական գործունեություն՝** +20.7%:
- **Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն՝** +14.7%:
- **Մշակույթ, զվարճություններ և հանգիստ՝** +12.8%:

Դրամական միջոցների ներհոսք ու փոխարժեք

Գծապատկեր 14 Դրամային փոխանցումներ և փոխարժեք



Գծապատկեր 15 Դրամային հոսքերն ըստ երկրների, մլն ԱՄՆ դոլար և տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ



Գծապատկեր 16: ՀՆԱ աճի կանխատեսում, %



2024թ. հունվար–դեկտեմբերին դրամային փոխանցումների ընդհանուր ներհոսքը կազմել է 5,837.1 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ աճելով 2.5%–ով:

2024թ. հունվար-դեկտեմբերին զուտ ներհոսքը կազմել է 1,509.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժ/շ նկատմամբ կրճատվելով -8.8%–ով:

Դրամային փոխանցումների առավելագույն մասնաբաժինը 2 երկրներից է՝ Ռուսաստան և ԱՄՆ (գումարային տեսակարար կշիռը կազմել է 77.3%):

- Ռուսաստանից դրամային ներհոսքը կազմել է 3,821.3 մլն ԱՄՆ դոլար (2023թ. հունվար–դեկտեմբերի համեմատ աճել է 4.1%–ով).
- ԱՄՆ–ից դրամային ներհոսքը կազմել է 690.6 մլն ԱՄՆ դոլար (2023թ. հունվար–դեկտեմբերի համեմատ կրճատվել է -3.2%–ով):

ԱՄՀ-ի տնտեսական կանխատեսման համաձայն՝ 2025 թվականին ԱՄՆ-ի և Ռուսաստանի տնտեսական աճը կկազմի համապատասխանաբար 2.7% և 1.4%, իսկ 2026 թվականին՝ համապատասխանաբար 2.1% և 1.2%:

Գնաճը Հայաստանում և աշխարհում



Գծապատկեր 17. Գնաճի մակարդակ 2024թ. դեկտեմբերին տարեկան տոկոսային փոփոխություն



2024 թվականի հունվար-դեկտեմբերին գնաճը Հայաստանում մնում է ցածր:

Ստորև ներկայացվում է գնաճը Հայաստանում և տարածաշրջաններում՝

- Աշխարհ (162 երկիր)՝ 6.4%:
- Ասիա (43 երկիր)՝ 6.4%:
- Եվրոպա (46 երկիր)՝ 3.9%:
- Հայաստան՝ 1.5%:

Գների ինդեքսի միտումը



Գծապատկեր 18 Սպառողական գների ինդեքսի դիմնամիկան Հայաստանում, %



Գծապատկեռ 19. Գների ինդեքսի դինամիկան Հայաստանում, %

Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) 2024 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 0.3%, իսկ 2024 թվականի դեկտեմբերին 1.5%

Սպառողական գների ինդեքսը ներկայումս ցածր է ՀՀ Կենտրոնական բանկի (ԿԲ) կողմից սահմանված 4% նպատակային ցուցանիշից:

Հայաստանում ճյուղային գների ինդեքսների մեծ մասը 2024 թվականի հունվարից-դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում մնացել է համեմատաբար կայուն՝ արտահանման ոլորտում նկատելի բացառությունով:

- **Արտահանման գների ինդեքսը** բացասական է եղել 2024 թվականի հունվարից-հուլիս ընկած ժամանակահատվածում, սակայն 2024 թվականի օգոստոսից սկսած արտահանման գների ցուցանիշը դրական է դարձել:

Պետական բյուջե և պարտք

Գծապատկեր 20. Հայաստանի պետական պարտքը, մլն. ԱՄՆ դոլար



Գծապատկեր 21. Հայաստանի բյուջեի եկամուտը և ծախսերը, մլրդ. ՀՀ դրամ



Հայաստանի պետական պարտքը 2024 թվականի դեկտեմբերին հասել է 12,842.2 մլն ԱՄՆ դոլարի, որից՝

- **արտաքին պարտք՝** 6,454.1 մլն ԱՄՆ դոլար (--0.7% 2023 թվականի դեկտեմբերի համեմատ),
- **Ներքին պարտք՝** 6,388.6 մլն ԱՄՆ դոլար (+19.5% 2023 թվականի համեմատ):

Արտաքին պարտքը բաղկացած է հետևյալ տարրերից՝

- **Պետական պարտք՝** ընդհանուր արտաքին պարտքի 92.2%-ը (-0.01% 2023 թվականի դեկտեմբերի համեմատ),
- **Կենտրոնական բանկի պարտք՝** 7.8% ընդհանուր արտաքին պարտքի (-8.5% 2023 թվականի դեկտեմբերի համեմատ):

Հայաստանի բյուջեի եկամուտները 2024 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել են 2,579.2 մլրդ դրամ (**+9.3%** 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ): Աճը պայմանավորված է հարկերի և տուրքերի մուտքերով, որոնք նույն ժամանակահատվածում աճել են շուրջ 7.6%-ով՝ հասնելով 2,390.9 մլրդ դրամի:

Պետական ծախսերը 2024 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել են 2,955.3 մլրդ դրամ (+16.0% 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ), որից՝

- **Ընթացիկ ծախսեր. ավելացել են** 16.3%-ով (բյուջետային ոլորտի աշխատողների աշխատավարձ, ապրանքների և ծառայությունների ձեռքբերում, տոկոսների վճարում, դրամաշնորհներ և այլն).
- **Ոչ ֆինանսական ակտիվներ**. աճել են 14.6%-ով (ձեռքբերում և այլ գործունեություն):